զի անտանելի էին բանք թղթոյն. յայնժամ ձգեալ Երեմիա զձեռն իւր՝ ասէ ցեղիազար, զի՞ եւս կարդաս ըզբանս այդպիսիս. տուր ինձ զի պատառեցից զդա, և Սուքիաս բուռն հարեալ՝ յինքն էառ զթուղթն՝ և ասէ. ընդէ՞ր է քեզ պատառել զայդ. առ ազգս Հայոց բաղբեմք՝ խնդրել զդատաստան 'ի Մարտիրոսէ եւ յայտ առնել՝ թէ այսպիսիք ոմանք են դիմադարձք Եղիազարու։ Իսկ Երեմիա աղաչեաց տնտես առնել և յոչ ինչ համարել զբանս նորա. զի ես գիտեմ ասէ՝ թէ որպիսի ոք է նա յեղյեղուկ մտօք և անզգոյշ 'ի բանս. եւ այսպէս մեկնեցան 'ի միմեանց և Երեմիա գնաց յուխտ յԵրուսաղէմ. իսկ Մարտիրոս ելեալ յԵւդոկիոյ գնաց յԷջմիածին, եւ անտի 'ի Կոստանդինուպոլիս. եւ ըստ խորհրդոյ Յակոբայ Կաթուղիկոսի՝ գտանել իւր ձեռնտու զՄիրզէ և զՅոսրով արեւելեան վաճառականս Հայոց, և ես ասէ եկից հանդարտ զկնի քո։

Իսկ Աստուածատուր Պատրիարք՝ յորմէ յափշտակեաց Եղիազար զՊատրիարքութիւնն Երուսաղէմի, բազում ընծայիւք հաճեցոյց զԲդեշխ քաղաքին որ կոչէր Էմիր Էլ Հաճ Փաշա՝ և զայլսն. էառ գիր 'ի դատարանէ, և հանրագրութիւն յայլազգեաց, և առաքեալ 'ի դուռն՝ ամբաստան եղեւ զԵղիազարէ։ Եւ գրեաց առ Մարտիրոս վարդապետ 'ի Կոստանդինուպոլիս զի հնարասցի նանրացուցանել ըզՊատրիարքութիւն Եղիազարու եւ հաստատել զիւրն, յղեալ առ նա 20,000 դահեկան։ Եւ նորա տուեալ ինչ ինչ առ տեղապահ Եպարքոսին՝ էառ 'ի նմանէ թուղթ հաւանութեան, զի Աստուածատուր հաստատեսցի 'ի Պատրիարքութեան Երուսաղէմի, եւ ինքն Մարտիրոս 'ի փոխանորդութեան նորին. և առ հաստատութիւն այսր առեալ Մարտիրոսի ընդ իւր զԹլթլեանս և զնմանիս նոցա, ել եւ գնաց յԱդրիանուպոլիս, ուր եկեալ էր Եպարքոսն հանդերձ բանակաւ՝ դարձ արարեալ 'ի պատերազմէն Մահմատայ։ Եւ 'ի սոյն միջոցի Յակոբ Կաթուղիկոս ոչ դադարէր գրել ստէպ ստէպ գիր եւ նամակ օրհնութեան ընդ ամենայն տեղիս, աղաչելով զամենեսին մի կրկին դուռն բանալ երկպառակութեան, և մի՛ ընդդէմ զինիլ հարազատ աթոռոյ իւրեանց։ Եւ քանզի կային բազումք՝ որք